տեարց, եկեղեցականք և աշխարհականք, և բազում աղաչանօք և դառն արտասուօք աղաչէին զնոսա, տարի մի եւս համբերել. և նոցա գթացեալ յարտասուս նոցա՝ թէպէտեւ լուան պաղատանաց նոցին, բայց խնդրէին երաշխաւորս։ Դիմեալ նոցա առ Յովհաննէս վարդապետ, աղաչեցին զնա յանձն առնուլ զայն երաշխաւորութիւն, եւ տարան զնա 'ի դատարան, զի անդ էին ժողովեալ ամենայն պարտատերք։ Տեսեալ նոցա զՅովհաննէս վարդապետ, հառաջեցան ընդ նա, եւ ընկալան զերաշխաւորութիւն նորա, և առին 'ի նմանէ զմուրհակ օրինօք դատարանի այսպիսի պայմանաւ, թոյլ տալ նմա ամս 4. և ինքն ամ յամէ փոքր փոքր վճարեսցէ զամենայն պարտսն։

Եւ ապա առեալ տարան զնա հանդերձ միաբանօք առ Բդեշխն. պատմեցին նմա զդաշն զոր եդին՝ ցուցանելով զմուրհակն Յովհաննու։ Եւ Բդեշխն հաճեալ ընդ այն, գովեաց զՅովհաննէս վարդապետ, և զգեցոյց նմա վերարկու պատուոյ եւ արձակեաց 'ի վանս. եւ ինքն գրեալ ծանոյց զայս ամենայն 'ի Դուռն։ Դարձ արարեալ անտի Յովհաննու 'ի վանս՝ ժողովեաց զմիաբանսն, և յուսադրական բանիւք քաջալերեաց զնոսա չվհատիլ, և սկսաւ խորհիլ ընդ նոսա, յորոց միջի էր եւ Հաննա վարդապետ, որ պատմէ զայսոսիկ, և գտեալ զհասարակաց կնիք վանաց, խորտակեաց զայն, զի ամենայն Տեղակալք զմուրհակս պարտուց նովին կնքով կնքէին, և կոչէր կնիքն այն Օրինայ Դեհի-բէ-, յորոյ վերայ գրեալ կայր անուն վանաց Ս. Յակոբայ։

Զայս այսպէս արարեալ Յովհաննու վարդապետի, եւ 'ի կարգի եդեալ զիրս վանաց՝ եկ և գնայ 'ի Կոստանդինուպոլիս (1715), եւ մատուցեալ առ մեծամեծս Հայոց, ծանոյց նոցա զամենայն ինչ, եւս և զերաշխաւորութիւն իւր, և նոցա հաւանեալ գովեցին զնա, և հնարէին 'ի գբլուխս տանել զիրսն։ Իսկ Յովհաննէս վարդապետ յայտ արար նոցա եւ ասէ. այն վճարումն պարտուց ոչ ինչ օգտէ Աթոռոյն, բայց եթէ գիցի եւ յայն Աթոռ առանձին յատուկ Պատրիարք, որպէս էր յառաջագոյն, զի հայրապետնամ գթով հոգ տարցի այնմ։

Հաւանեալ այսմ մեծամեծացն Հայոց, յաւուր միում ժողովեցան առ նա, յորոց միջի երեւելի էր Ակնցի Երե-